

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐԸ
ՄԵՐ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ.*)

IV

Պատմութեան նիւթի ընտրութիւնից յետոյ երկրորդ կարեւոր խնդիրը մեթոդի-դասաւանդման ձևի խնդիրն է: Հասկանալի է, որ ոչ լաւ ծրագիրը, ոչ լաւ դասագիրքը չեն կարող լաւ դասատուութեան գրաւական լինել: Իւրաքանչիւր առարկայի շունչ, կենդանութիւն տուողը ուսուցիչն է: Ի դուր չէ, որ աշակերտները սիրում կամ խորշում են մի առարկայից ի նկատի ունենալով ամենից առաջ դասատուի անձնաւորութիւնը:

Պատմութեան լաւ դասատու ունենալը ամենից առաջ անհատի ընդունակութեան հարցն է. բայց ընդունակ դասատուն անգամ կարիք ունի դասաւանդան յարմար ձևերի ցուցմունքների. իսկ յայտնի է, որ ընդունակ դասատու առ հասարակ քիչ կայ. սովորական բարեխիղճ ուսուցչի գործը թեթևացնելու համար անհրաժեշտ են մեթոդական ցուցումներ, որոնց հետեւելով և առարկան արդիւնաւէտ կդառնայ և աշակերտների գործը կթեթևացնէ:

Պատմութիւնը իւր անուան համաձայն պատմողական առարկայ է. դասատուն պէտք է լաւ պատմող լինի. պարզ, բայց հարուստ լեզու, կենդանի ոճ ունենայ: Իրաւամբ կամպէն նկատում է, որ դպրոցում ամենալաւ դասատուն, պատմելու կողմից, պատմութեան ուսուցիչը պիտի լինի: «Ով կարողանում է պայծառ, գունեղ և յափշտակութեամբ նկարագրել, կենդանի պատկերներով, առօրեան, պատմական դէպքը, գործչի բնաւորութիւնը, նա պատմութիւնը սովորեցնելու ամենից լաւ միջոցը կգործադրէ» (89 եր. Ուլանով):

Պատմութեան դասատուն ամենից առաջ պէտք է աշխատէ աշակերտների գիտեցածից օգտուել, հնի վրայ նորը կառուցանել: Ուստի նա պիտի ծանօթ լինի այն գաւառի, շրջանի պատմական

*) «Արարատ» Սեպտեմբեր-Հոկտեմբեր եր. 730—741.

կոթողների, աւերակների, յիշատակարանների, Կոնէ մօտիկ անցեալի հետ, ուր որ ինքն աւանդում է, որ աշակերտների աչքի առաջ եղող պատմական անցեալով լուսաբանէ շատ խնդիրներ, նրանց տեսածի ու լսածի հիման վրայ սկսել պատմութիւնը, պարզել շատ խնդիրներ։ Այս տեսակէտից կարևոր է այսպէս կոչուած գաւառագիտութեան (краевѣдѣніе) զարկ տալ, մի բան, որ ուսանական զեմստիւօնները մեծ չափերով գործադրում են զընդունների կանոնաւորման տեսակէտից։ Նաև գաւառի կենդրոնական վայրում՝ քաղաք կամ մեծ գիւղ, հիմնում են թանգարան՝ մանկավարժական առարկաների, պատկերների, մօդէլների, հանքաբանական, բուսաբանական, կենդանաբանական ժողովածուների, կարևոր ձեռնարկների, որից օգտուում են թէ դասատուները, թէ աշակերտները։ Այսպիսով գասատուի յաջողութեան պայմաններն են՝ լաւ լեզու և գիտողական առարկաներ։

Դասատուի համար առաջին օժանդակ միջոցը (և ոչ միակ գլխաւոր ազդեւորը, ինչպէս մեզանում կայ) դասագիրքն է։ Դասագրքի լեզուն պիտի լինի հակիրճ, կարճ նախագասութիւններով, փոքրիկ պարբերութիւններով, դասագրքից միանգամայն պիտի հանւի մանր տառերով տպելու սովորութիւնը։ Եթէ նիւթը կարևոր է պէտք է միւսների նման տառերով տպագրել, եթէ անկարևոր է պէտք է հանել ոչ դասագրքի ծաւալը մեծացնել, գինը բարձրացնել, ոչ էլ աշակերտի յիշողութիւնը ծանրաբեռնել, որովհետև իբրև միւսներից տարբերուող կտոր աշակերտը հետաքրքրութիւնից դրդուած կարդում է. կան և այնպիսիները, որոնք սովորում են ուսուցչին հաճելի լինելու համար։

Կան մարդիկ, որոնք տարրական դպրոցում դասագիրք մըտցնելուն հակառակ են*) ամեն ինչ բերանացի են ուզում աւանդել, առարկելով, թէ աշակերտը դասագրքի գերի է դառնում, ինքնուրոյն աշխատելու, մտածելու վրայ հոգ չի տանում։ Սրանց հակառակորդները պնդում են, թէ դասագիրքը աշակերտի համար մի յուշատետր է նրանից լեզու է սովորում, ուսուցչի պատմածից ինչ որ չի յիշում կարդում, վերաբտադրում է։ Մեզանում անշուշտ դասագիրք պիտի ունենալ, որովհետև թէ աշակերտը լեզու կսովորէ, թէ դասատուն որոշ կարգով կաւանդէ առարկան, թէ ապագայում աշակերտի համար դասագիրքը կդառնայ վերջիջելու լաւ միջոց։

Դասատուն առաջօրէն պէտք է անպայման մշակէ դասը. ամեն անգամ դասագրքի նիւթի հետ ծանօթանայ։ Իրօք, այն ու-

*) Общеземскій съѣздъ по народному образованію. Москва

սուցիչը, որ դադարում է սովորելուց, դադարում է լաւ դասատու լինելուց: Պէտք է կազմէ նիւթի ծրագիրը, եթէ գրականութեան մէջ կայ համապատասխան կտոր (ոտանաւոր, վէպ) կարգայ, ընտրէ նիւթին վերաբերեալ պատկերներ և դասին ցոյց տայ, ապա վերլուծէ անցնելիք նիւթի էական մասերը, ապա պատմէ ամբողջը գողտրիկ լեզուով: Պատմելիս չպէտք է մոռանայ, որ աշակերտների բառարանն աղքատ է. պատահող անծանօթ բառերը պէտք է առաջօրէն գրատախտակի վրայ գրէ և ապա բացատրէ. պատմելուց յետոյ պէտք է ամփոփել հարցեր տայ և ամբողջը այդ ձևով մի անգամ էլ աշակերտներին կրկնել տայ: Եղած պատկերները պէտք է աշխատէ ըստ հնարաւորութեան ցոյց տալ դասի վերջը աղմուկից և դասի ընդմիջումից խուսափելու համար: Դժւար բառերի բացատրութիւնների համար մի քանի դասատուներ պատուիրում են աշակերտներին տետրակներ պահել, գրել և սովորել: Եթէ դասագիրքն անյաջող լեզուով է գրած դասատուն պիտի դասը կարգայ դասարանում և դժւար ոճերը, բառերը բացատրէ: Դասագրքից ուսուցչի կարծիքով աւելորդ համարուած կտորի վրայ գծելը պէտք է լինի. նաև աշակերտի համար դասագրքի արժէքն է նսեմանում, երկրորդ աշակերտը այնու ամենայնիւ կարդում է այդ կտորը: Դասատուն չպէտք է պահանջէ դասագրքի լեզուով պատմել և ոչ էլ բոլորը ամենայն մանրամասնութեամբ կրկնէ. աշակերտին պէտք է ներշնչել ինքնագործունէութեան ոգի. պիտի աշխատել, որ աշակերտը ինքնուրոյն լեզուով ու ձևով պատմէ: Փորձը ցոյց է տւել, որ երբեմն աշակերտը աւելի պարզ, հասկանալի ձևով է պատմել մի դէպք, անցք, քան ուսուցիչը. նկատած կլինեն և միւս դասատուները, որ աշակերտները աւելի հեշտութեամբ սովորում են նիւթը, երբ դասարանի ընդունակ աշակերտն է պատմում: Այն ուսուցիչը, որը կարող է յաջող նկարել, լաւ կանէ, եթէ գրատախտակի վրայ գծէ գործիքի, զէնքի պատկերը, բանականորէն, համառօտ քարտէզը և այլն *):

Անցեալը հասկացնելու համար դասատուն կարող է դիմել ներկայի որևէ նման երևոյթի և համեմատել երկուսը, չմոռանալով յիշեցնել, որ այնու ամենայնիւ երկու երևոյթների մէջ ահագին տարբերութիւն կայ: Մեծ տեղ պիտի տայ նկարներին, ստերիօսկոպին, կաւից, մոմից ծեփելուն: Նպաստաւոր է համապատասխան

*) Առհասարակ պատմութեան մեթոդի. մշակուած դասերի մասին տեսնել—Протоколы комиссии преподавателей истории и русского языка среднихъ учеб. заведений г. Тифлиса.—Тиф. 1902 г.

աշակերտի հասակի պատմական անցքեր, տեսարաններ ներկայացնելը, այս դէպքում աշակերտը պատմական զգեստների, զէնքերի մասին գաղափար կկազմէ, պատմական լեզուն կսովորի, թագաւորի, իշխանի, զօրքի, ժողովրդի փոխ յարաբերութիւնները կը պարզուեն: Դասատուն պէտք է տանէ աշակերտներին թանգարանները. նկարներ, դրամներ, զգեստներ ցոյց տալու. ճանապարհորդել պատմական վայրեր, առաջօրէն նախապատրաստելով աշակերտներին. եթէ հնարաւոր է լուսանկարչական գործիք վերցնել հետները. ճանապարհորդելուց յետոյ աշակերտները պէտք է նկարագրեն իրենց տեսածն ու լսածը:

Դպրոցը պէտք է խնամքով ժողովէ պատմական գրքոյկները, մատենադարանում յատուկ բաժին ունենայ. ուսուցչի առաջնորդութեամբ պէտք է աշակերտները կարգան և ապա պատմեն. երբ տեղին է դասին հէնց աշակերտներին դասատուն պէտք է աշխատէ օժանդակ միջոցներով լրացնել անցած նիւթը, աշակերտի հետաքրքրութիւնը զարթեցնել:

Անցածը կրկնելու դէպքում լաւ է, որ ոչ թէ դասագրքի դասաւորութեամբ կրկնեն, այլ զանազան շաղկապումներով. օրինակ նման պատմական անցքերը համեմատել տալ, այս կամ այն պետութեան, ժողովրդի մասին ամբողջ ուսման տարուայ ընթացքում սովորածը կրկնել, պետական կազմերը տալ կրկնելու և այլն. այսպիսով աշակերտը աւելի ինքնուրոյն և հետաքրքիր աշխատանք կկատարէ: Օգտակար է գրաւոր և բերանացի շարադրութեան նիւթեր տալ սովորածից, այս շարադրութիւնը քննել դասարանում, անպայման աշակերտները պիտի գլխաւոր դերը կատարեն *):

Ուլանովը բուն պատմութեան անցնելուց առաջ կարևոր է համարում աշակերտների հետ զրոյց ունենալ՝ 1) ժամանակի և տարածութեան, 2) նախամարդու կեանքի, 3) բնութեան և թէ ի՞նչ է տալիս մարդուն, 4) Սլաւոնական գիւղի և քաղաքի և 5) սլաւոնների խաղաղ փոխ յարաբերութիւնների մասին: Ըստ ինքեան մեր դպրոցներում վերջին երկու կէտերը գործադրելի չեն. բայց և չպէտք է համապատասխան նիւթերով փոխարինել. ըստ իս աւելի յարմար է, ինչպէս մի այլ տեղ Ուլանովի ասում է, աշակերտին գաղափար տալ պատմութեան ի՞նչ լինելու մասին: Օրինակ ուսուցիչը աշակերտին ասում է, որ սա պատմէ թէ ժրտեղ է ծնւել, երբ, ի՞նչ տեղեր է եղել, ի՞նչ է արել, տեսել և այլն. աշակերտը պատմում է այսպիսով իր կեանքը, նոյնը կարող է

*) Դանրամասն տեսնել—С. Троицкого—Краткая методика истории Казань 1914 г.

անել նաև իրենց ընտանիքի, զիւղի, աշակերտին ծանօթ որ և է պատմական երևոյթի նկատմամբ:

Ժամանակի գաղափարը հասկացնելու համար պէտք է աշակերտի, հօր, պապի, կամ մօտիկ անցեալի որ և է նշանաւոր դէպքերը յիշել տայ. տարածութեան գաղափարը շօշափելի դարձնէ դպրոցի շրջակայ գիւղերը, վայրերը ուշադրութեան առնելով: Այս դէպքում մեծ տեղ տրւում է աշխարհագրութեանը, որի մասին խօսելը խնդրիցս դուրս է: Չպէտք է մոռանալ բնութեան ազդեցութիւնը յիշատակելու ժողովրդի կենցաղի, բնաւորութեան, պետական կազմի վրայ:

Ուլանովի գրուածքի Բ. մասը դասատուի համար մի լաւ խորհրդատու է. այս տեղ յիշատակուած են դասատուին և աշակերտին յանձնարարելի օժանդակ գրքերը, նկարները, ի՞նչ ֆիրմաներ ունեն մոզական լապտերներ, ստերիօսկօպներ և այլն:

Այսքան դիւրութիւններ ունեցող դպրոցում բնական է, որ ազգային պատմութեան դասաւանդումը և բեղմնաւոր լինի և նպատակին ծառայէ: Հէնց այս ամենի հետ ծանօթանալուց յետոյ է, որ մեր ազգային պատմութեան դասաւանդման խնդրի ցաւոտ լինելը աչքի է ընկնում: Կարգացէք այդ և նման այլ մեթոդիկաները և կտեսնէք որքան խեղճ է մեր դպրոցների ազգային պատմութեան դասաւանդումը:

V

Ի՞նչ տեղ է տրւում պատմութեանը մեր տարրական դպրոցներում:

Տեսանք, որ ժամերի քանակի, ճիշդ դասարանից սկսելու և որ տեղ վերջացնելու հարցը անբաւարար է լուծուած և պէտք է փոխել: Իսկ թէ ի՞նչ նպատակի է հետևելու պատմութիւնը և ի՞նչ տեղ է բռնելու դպրոցում հոգևոր իշխանութեան կողմից պաշտօնական պարզաբանութեան չէ արժանացած. որքան յայտնի է այս խնդիրը լուծուած է Ներսիսեան դպրոցի հրատարակած «Նախագիծ կանոնադրութեան և ծրագիր Հայոց եկ. տարրական դպրոցների» (Թիֆլիս 1906 թ.) գրքոյկում, որի 21 երեսից սկսւում է պատմութեան բացատրութիւնը:

«Պատմութեան դասաւանդման նպատակն է՝

ա) Բարոյակրթական.—Արժարժեւ և կրթիւ աշակերտներին մէջ հասարակական ձգտումներ, ներշնչելով երախտագիտութիւն դէպի նախնիքները և պարտաճանաչութիւն դէպի ժամանակակիցներն և յետնորդները:

բ) Գործնական.—Ծանօթացնել շրջապատող հասարակական կազմի հետ, տալ անհրաժեշտ գիտելիքներ այդ կազմի մէջ վայելած իրաւունքների և ունեցած պարտականութիւնների մասին և ցոյց տալ ժամանակակից սերնդի աշխատանքի տեղը հանրամարդկային աշխատանքի մէջ: (21 եր.):

Ինչ վերաբերում է ա. նպատակին, տեսանք, որ բարոյական աշխարհը պատմութեան մէջ շատ առաձգական ու խախուտ է, հետևապէս կիրառելի չէ:

Բ. նպատակը այնքան բարդ ու դժուարամարս է, որ ոչ միայն 12—14 տարեկան, այլ և միջնակարգ դպրոցների աշակերտների համար առաջադրել ծանր է: Մեր դպրոցներում աշխատողը պարզապէս կտեսնէ, որ կազմողները բաւական հեռու են կանգնած մեր գաւառական կեանքից, անծանօթ են երեխաների մտաւոր պաշարին: Վերոգրեալ նպատակը իրականացնելու համար երեխաները պէտք է գոնէ առիթ ունենան հասարակական կազմի արտայայտութիւն—կառավարչական մարմինները պաշտօնատեղերը իշխանաւորներին տեսնելու. պէտք անցկենան օրէնսգիտութիւն (законоведѣніе) ինչպէս ռուսաց դպրոցներում է, պիտի մտաւոր պաշար ունենայ իրաւունք, պարտականութիւն զաղաքաւորները հասկանալու: Այս ամենը տարրական դպրոցի Ե. քաժ.-ի աշակերտը չունի, բնական է, որ յիշեալ նպատակն անիրագործելի կմնայ: Ամենից յարմարը Ուլանովի վերը յիշածս որոշումն է, որին պէտք է ձգտենք և մեր տարրական դպրոցներում: Ըստ կազմողների «... ուսուցիչը պիտի միշտ աչքի առաջ ունենայ, որ աշակերտների համար պարզ լինեն այն պատմական-քաղաքակրթական աստիճանները, որոնցով անցել է հայոց ազգը, ...» (26—27 եր.): Այդ աստիճանները նրանց կարծիքով վեց են. (տես 27 եր.): Դեռ մի կողմ թողնենք այն հարցը, թէ որքան ճիշտ են որոշել այդ աստիճանները կազմողները. հաշուենք այն մտքի հետ, որ պատմութեան գասագիրք կազմողը մեծ մասամբ իւր հայեացքով է ստորաբաժանում նիւթը, աշակերտի դիւրութեան համար և ոչ պատմական ճշմարտութիւնն աչքի առաջ ունենալով միշտ:

Մի բան սակայն զարմանալի է. կազմողները պահանջ են դնում, որ աշակերտների հետ հայոց քաղաքակրթութիւնն անցնենք, այն հայերի. որոնց քաղաքական պատմութեան աղբիւրները լրիւ հրատարակուած չեն, ուսումնասիրուած չեն, որի շատ կէտերը դեռ մութն են, իսկ քաղաքակրթութեան մասին միայն լուրեր ունենք և ոչ ուսումնասիրութիւններ: Տուէք նախ մեր քաղաքական կեանքի ճշգրիտ պատկերը, ապա նոր հիւսենք այդ կանաւայի վրայ մեր քաղաքակրթութիւնը: Ո՞ւր է մեր գեղարուեստի, դրականութեան, իրաւունքի, տնտեսութեան վերաբերեալ

նիւթը, թիւ է ուսումնասիրել, թիւ է պարզել այդ խնդիրները և դարձրել դասագրքի նիւթ։ Մենք աւելի բնագոյրէն, քան գիտական ոգեւորում ենք ու պարծենում այն քաղաքակրթութեամբ, որը դեռ մոխիրների, փոշիների տակ է թաղուած, անյայտութեան մէջ է։ Այդ քաղաքակրթութեան բեկորներից նմուշներ են երևան հանել ուսումնասիրողները և մերոնք այդ նմուշները արդէն քաղաքակրթութեան պատմութիւն են դարձնում և պահանջում, որ աշակերտն էլ սովորէ...

Ասենք թէ, անգամ այդ ամենը ուսումնասիրուած է, նիւթը կայ, բայց թիւ ենք առաջարկում, 12—14 տարեկան երեխային, որը դեռ 10—15 գիրք չէ կարդացել, մի գեղարուեստական նկար չէ տեսել, մի ճարտարապետական շէնք չի տեսել. որը գրականութեան հոտը նոր պիտի առնէ։ Թեմական Դպրոցներում պատմութիւն աւանդող դասատուները լաւ գիտեն, թէ իր քան զժողովրդական են Ե-Չ. դասարաններում 16—18 տարեկան պատանիները այդ խնդիրները հասկանալ. մինչև դիտողական միջոցների, անմիջական աղբիւրների չի դիմում ուսուցիչը, աշակերտները զժողովրդական են պարզ գաղափար կազմել։

Պատմութեան էութեան սխալ ըմբռնման հետևանքն է եղել և իւրաքանչիւր դասարանի համար առաջարկուած նիւթի ծրագիրը. (30—35 եր.) յիշեմ մի երկու օրինակ, Ե. դասարանի (բաժանմունք պիտի հասկանալ). ծրագրի 8-րդ կէտում, յիշուած է, անցնել «կաթուղիկոսների յարաբերութիւնը թագաւորի և նախարարների հետ» (32 եր.) 10-րդ կէտ «նախարարական կազմակերպութիւնը... նախարարների յարաբերութիւնը թագաւորի և ուրիշ նախարարների հետ» (32 եր.) 16-րդ կէտ «Արարների ազդեցութիւնը հայոց քաղաքակրթութեան վրայ։ Հայոց ճարտարապետութիւնը։ Արարների ազդեցութիւնը հայոց ժողովրդական բանաստեղծութեան, լեզուի, երգեցողութեան և գրականութեան վրայ։ Առևտուր և շառկութեան ճանապարհներ», (33 եր.)։ Ահա հարցեր, որոնք ոչ պարզուած են, ոչ ուսումնասիրուած և ոչ էլ տարրական դպրոցի աշակերտներին մատչելի։ Պարզ է, որ կազմուած ծրագիրը պէտք է հիմնովին փոխել։

Բացի նիւթի անյարմարութիւնը կազմողների առաջարկած մեթոդը՝ շրջանաձև մեթոդ, նոյնպէս անյարմար է, արդէն հնացած և դպրոցների մեծ մասից վտարուած։ Մեթոդի մասին վերը խօսք է եղել, ուստի աւելորդ է կրկնել նոյնը այստեղ։

Նախ մի պատմութեան նիւթի դասաւորութիւնը, բացատրութիւնը աւելի պակասութիւններ ունին, քան յիշեցի. ուղեցայ ցոյց տալ միայն, որ մեր տարրական դպրոցների համար ազգային պատմութեան առարկան դեռ մշակուած չէ, մի բան,

որ հէնց կազմողները հաստատում են, «Ինչպէս յայտնի է, Հայոց պատմութեան համար շունինք ժամանակակից գիտութեան պահանջների համեմատ մշակուած դասագիրք» (27—28 եր.) Իսկ դասագիրքը չկայ, որովհետեւ մեր պատմութեան նիւթը դեռ մշակուած չէ:

Մինչև այժմ մեր դպրոցներում գործադրուող դասագրքերն էլ նոյնն են հաստատում: Ամենից գործածական դասագրքերը, որքան ինձ է յայտնի, Գր. Վարդանեանի և Խան Աղատ, և Գր. Վանցեանի կազմած ձեռնարկներն են, որոնք գործադրում են աւելի շուտ նրա համար, որովհետեւ աւելի լաւը չկայ, ուրիշ խօսքով ճարահատեալ: Գր. Վարդանեանի և Խան Աղատի կազմած ա. տարուայ դասագրքի նախապատմական մարդու նիւթական կեանքը սկզբից մինչև վերջը սրբագրութեան կարօտ է, հեղինակներն օգտուել են՝ Մասպետի, Լիպեթի, Տալլօրի, Էնգէլսի և այլ աշխատութիւններից: Յայտնի է, որ Ժ. Դարու հեղինակները առաւելապէս ճանապարհորդ-ժողովրդագրեր (этнографы) են եղել, որոնք իրենց նիւթն առել են դեռ ապրող վայրերի ցեղերի կեանքից, որոնց կեանքից եզրակացրել են նախապատմական մարդու կեանքը: Գիտենք, որ այժմ աւելի լուրջ ուսումնասիրութիւններ կան այդ հարցերի շուրջը (Ռայցէլ, Շուրց), և որ ընդհանրապէս համեմատութեան (аналогия) մեթոդը բաւական վտանգաւոր է անճիշտ եզրակացութիւնների տեղիք է տալիս: Նախամարդու կեանքը աւելի բարդ ու բովանդակալի է, քան ներկայացրուած է դասագրքում: Ինչքան Ռուսոյի նկարագրած բնութեան զաւակն է երջանիկ և իրական, նոյնքան նախապատմական մարդու կեանքն է պարզ և նրա հոգու աշխարհի երևոյթները հեշտ բացատրելի: Ո՞ր աստիճան անուշադիր են եղել կազմողները երևում է նրանից, որ 1 գլուխ II-րդ երեսում ասեն «Այդտեղ (տաք երկրներում) մարդը առանց աշխատանքի ու դժուարութեան թէ կերակուր և թէ ապաստան է գտնում...» 28-րդ գլ. 81-րդ երես. *) զրում են «Նրանք (նախամարդիկ) հազիւ էին օրէցօր իրանց գլուխը պահում, ամեն ինչ այնպիսի դժուարութեամբ էր ձեռք բերում, որ ոչ ոք չէր ուզում իր ունեցածն ուրիշին տալ կամ ծախել:

«Իսկ շունեցած բանը նրանք, փոխանակ գնելու կամ փոխարէնը մի բան վճարելու ձեռք էին բերում գողութիւնով կամ աւազակութիւնով»: Հակասութիւնն ակնհերե է:

Կրօնի (83—4) լեզուի (95 եր.) ծագումներին միամիտ բացատրութիւններ են տուել. չերկարաբանելու համար մատնանշեմ

*) Դասագիրք պատմութեան. I տարի. Գր. Վարդ. և Խ. Խան Աղատ. Թիֆլ. 1910 թ.

Վոլկերի «Ժողովրդների հոգեբանություն» (Völkpsychologie) աշխատանքը, ուր այդ խնդիրները մեկնարանառած են այլ հոգեկան տուեալներով և այն էլ ոչ իրրե հաստատ փաստ, այլ հաւանական ենթադրութիւնից: Լեզուական անյարգութիւններ ևս կան դասագրքում. օրինակ «...մի այն Տաւրոսցի քաջերն էին, որ յանգոնութիւն ունեցան առաջ մղուելու, պաշարելու Արտաշէսին վտանգաւոր կերպով և աշխատելու, պաշարելու Արտաշէսին տուած խոստման համաձայն՝ սպանելու Արտաշէսին» (115 եր.) կամ «Դրանից յետոյ հազիւ թէ թագաւորի և Արգամի միջև հաշտութիւն էր կայացել և վերջինն իր կալուածները յետ ստացել, երբ Արտաւազդը վճռում է գրաւել Արգամի Նախիջևան քաղաքը և Նրասի գետի հիւսիսային կողմն ունեցած կալուածները: (123). և այլն:

Նման խճողուած, երկար պարբերութիւնները. գ. բաժ. աշակերտի համար անմարս, անհասկանալի են: Դասագրքի պատկերներն էլ անյաջող են, մրոտ, փոքր. (ընդհանրապէս լաւ նկարներով հայ լեզուով դասագիրք չունինք):

Նոյն հեղինակների կազմած Դ—Ե. բաժանմունքների համար ձեռնարկն ևս ունի անյարմարութիւններ:*) Նախ դասագրքի ա. մասում դրուած «Հին Հայաստանի երկիրն ու ժողովուրդը» (3—14 եր.) միանգամայն աւելորդ է. որովհետեւ բոլոր տեղեկութիւնները, որ դրած են այս մասում թէական են ու հատուկտոր. և այնպիսի հարցեր են, որոնք Ե. բաժ. աշակերտներին անհասկանալի կմնան. օր. «Հայաստանի վարչական կազմը» (6 եր.) Նախարարներ (8 եր.):

Կադմոդները ամբողջ Հայոց պատմութիւնը տեղաւորել են մօտ 130 երեսում. (հանուած մանր տառերովը, նկարները) և այս երկու տարուայ կուրս է: Բնական է, որ 130 երեսում տեղաւորել Հ. պատմութիւնը հնարաւոր է մեծ թռիչքներ կրճատումներ անելով, խախտելով և պատմութեան և պատմական կեանքի զարգացման ամբողջութիւնը:

Եւ իրօք կադմոդները իրենց կարծիքով պատմութեան գլխաւոր կէտերն էր շօշափել, իսկ տեսանք առաջ, որ պատմութիւնը ըստ ինքեան եղածի, կատարուածի թերի պատկերն է. եթէ այդ թերին էլ մենք մկրատի կերակուր դարձնենք ու խուզենք, դուրս կգայ մի աղաւաղումն եղածի:

Երեւն Տիգրանին յատկացրել են 23 երես (15—38 եր.) Բագրատունեաց հարստութեանը 21 եր. (87—108 եր.) Ռուբինեանց 9 երես (110—119 եր.):

*) Հայաստանի պատմութիւնը. (գլխաւոր կէտերը). Գր. Վարդան. եւ Ռ. իսան Ազատ. Թիֆլ. 1911 թ.

Լեզուական անյարդութիւններ, օրին. «Միհրդատը, երկար ժամանակ հռոմայեցիների հետ պատերազմած լինելով, փորձով դիտէր, որ նրանց հետ բացարձակ ճակատամարտի դուրս գալը վտանգաւոր է. այդ պատճառով էլ նա դիտմամբ ուշանում է Տիգրանին օգնութեան գալու, որպէս զի նա սիրտ առած ճակատամարտի դուրս հզայ Լուկուլլոսի դէմ» (25 եր.) կամ «Լուկուլլոսի թէև փոքրաթիւ, բայց լաւ վարժուած բանակը մէկ օրուայ մէջ, սակայն, սոսկալի ջարդ է տալիս Հայոց Թագաւորի բանակին, որը թէև բազմաթիւ, բայց ծանրաշարժ էր և բացի այդ կանոնաւոր պատերազմների էլ անվարժ էր» (26 եր.) և այլն 33, 37, 45 երեսներ: Նման երկար, խճողուած նախադասութիւնները Դ. բաժ.-ի աշակերտների համար անմարս են:

Աւելի անյաջող է Գ. Վանցեանի կազմած ձեռնարկը*) «Հայերի ծագումը» (5—7 եր.) Գ. բաժ.-ի սաների համար միանգամայն անմարս է. Խալդերի մասին (15—6 եր.) մանր տառերով տեղեկութիւնը նոյնպէս աւելորդ կտոր է. 2 երեսում մի ողջ ցեղի, կուլտուրայի պատմութիւնը դնել անհնար է. եթէ աւելորդ է այդ կտորը ինչո՞ւ դնել, իսկ եթէ կարեւոր է՝ դնել կանոնաւոր բացատրուած, ինչպէս ուրիշ ձեռնարկներում կայ: Ձեռնարկի նիւթն աւելի է, քան Գր. Վարդանեանի և Ռ. խան Ազատինը, բայց մեծ մասամբ թուերի ու անունների ժողովածու է. նմուշի համար տես 24—27 եր. Տիգրան Մեծի մասին. Հեթանոս Հայոց (44 եր.) մի երեսում տեղաւորել կնշանակէ այդ հետաքրքիր նիւթը. աղաւաղել, կրճատել «Հայոց հարցը, Սասնի ջարդը և քննիչ յանձնաժողովը. Զէյթունի անցքերը, Կովկասեան անցքեր» (139—149 եր.) այնպիսի նիւթեր են որոնք և. բաժ.-ի աշակերտներին հասկանալի չեն լինելու, մանաւանդ գրուած են այնպիսի լեզուով, որ լրագրի յօդուածի տպարութիւն են թողնում: Այդ տեղեկութիւնները պէտք է թողնել ուսուցչին. որ նա յարմար ժամանակ տայ աշակերտներին, չէ՞ որ ամեն բան դասագրքում չպէտք է գրուի. որոշ հարցեր էլ վերապահուելու են ուսուցչին, որ նա յարմար դէպքում ծանօթացնէ աշակերտին: Լեզուն աւելի բարդ է, երկար պարբերութիւններով ու դժուար բառերով լի. (6-րդ, 17-րդ, 49-րդ և այլ երեսներ) ժամանակ է նաև վերջ տալ մեր Թագաւորների մտածածին պատկերներին: Այսպէս տեսնում ենք, որ ամենից գործածական դասագրքերը հէնց արտաքին, ոչ զուտ պատմագիտական, բաւական թերութիւններ ունին. ուսուցիչը և աշակերտը 3—4 տարի շարունակ գործադրում են այդ անբաւարար դասագրքերը և դրանցով է ահա մեր պատմութիւնը աւանդւում դըպ-

*) Հայոց պատմութիւն. Գ. Վանցեան. Բ. տպ. 1908 թ. Թիֆլ.

րոցներում: Աւելացնենք և այն, որ ցայսօր դպրոցներում գործադրելի մի յարմար քարտէզ չունենք հին Հայաստանի հայերէն լեզուով. Գ. Վարդանեանի հրատարակածը և սխալներ ունի և հարեան երկրներից՝ Պարսկաստանի, Հռոմի, Յունաստանի քարտէզները չկան, իսկ գիտենք, թէ այդ երկրները որքան սերտ կապ ունին մեր պատմութեան հետ: Զունինք նկարներ, գրքոյկներ պատմական բովանդակութեամբ. ինչպիսին ունին ռուսները *):

Յայսօր մեր մատենագիրներէից չենք քաղել յարմար ընթերցանութեան կտորները և պատմական խորհատմատեա չենք հրատարակել. նոյնը չենք արել աշխարհաբար լեզուով լոյս տեսած գրուածքների վերաբերմամբ. Սրանք այնպիսի օժանդակ սիջոցներ են, որոնցով առարկան կենդանութիւն, շունչ է ստանում, աշակերտի մէջ հետաքրքրութիւն է դարձնում, առարկան իրօք օգտակար արդիւնք է ունենում աշակերտների համար:

Հ. պատմութեան դասաւանդման խնդիրը ամեն կողմից ցաւոտ է և լուրջ ուշադրութեան կարօտ. քիչ թէ շատ բաւարար լուծել այդ հնարաւոր է այժմ, եթէ թէ դպրոցական պատասխանատու մարմինները անուշադրութեան չմատնեն այն:

Դիւս արեղայ.

*) См. Практическая Школьная Энциклопедія под ред. Н. В. Тулузова и П. М. Шестакова. Моск. 1912 г. стр. 289—292, 299—308.